

ՀԱՍՏԻՔ՝ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ  
ՎԱՅՐԸ՝ Երևան, ՀՀ  
ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ՝ 17.02.2019  
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ամբողջ դրույք  
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԿՍԵԼՈՒ  
ԱՄՍԱԹԻՎԸ՝ անմիջապես  
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ երկարաժամկետ

«Ամերիա» ՓԲԸ-ն փնտրում է եռանդուն և բարձր մոտիվացիա ունեցող թեկնածուների՝ ընկերության Կառավարման խորհրդատվական ծառայությունների թիմում **խորհրդատուի** թափուր պաշտոնը համալրելու համար: Խորհրդատուն թիմի կազմում ներգրավված է լինելու հաճախորդներին ռազմավարության մշակման, գործառնական կառավարման, արդյունավետության և ընդհանուր ֆինանսական կատարողականի բարելավման, բիզնեսի վերակառուցման, փոփոխությունների կառավարման, մարդկային ռեսուրսների, ռիսկերի ու ծախսերի կառավարման և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացում:

### Հիմնական պարտականությունները

- Կատարել գնահատումներ, իրականացնել հետազոտություններ և հավաքագրել տվյալներ՝ պոտենցիալ հաճախորդների կարիքները բացահայտելու համար
- Մշակել հնարավոր լուծումներ հաճախորդի խնդիրների համար
- Մշակել իրագործելիության ուսումնասիրություններ և ներդրումային ծրագրեր՝ թիմի ավագ գործընկերների ուղղորդման ներքո
- Մշակել շուկայի ուսումնասիրություններ և ամփոփել դրանց արդյունքները՝ հաշվի առնելով ծրագրի պահանջները
- Մշակել ֆինանսական կանխատեսումներ՝ թիմի ավագ գործընկերների ուղղորդման ներքո
- Մշակել հաճախորդ ընկերություններում գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ՝ թիմի ավագ գործընկերների ուղղորդման ներքո
- Անհրաժեշտության դեպքում աջակցել հաճախորդին մշակված առաջարկությունների ու տրված լուծումների իրականացման հարցում
- Աշխատել ներքին և արտաքին խորհրդատուների և այլ փորձագետների հետ
- Մասնակցել հանրային խորհրդատվական ծրագրերին որպես փորձագետ՝ իր մասնագիտական կարողությունների շրջանակներում

### Պահանջվող հմտությունները և փորձը

- Խորհրդատվության գործընթացի հիմնական փուլերի գերազանց իմացություն
- Խորհրդատվական գործիքների և մեթոդների գերազանց իմացություն
- Հայեցակարգային և վերլուծական մտածելակերպ
- Ներանձնային շփման և հաղորդակցման գերազանց հմտություններ
- Լարված և մարտահրավերներով լի աշխատանքային միջավայրում աշխատելու կարողություն
- Բազմաֆունկցիոնալ թիմում աշխատելու կարողություն
- Կառավարման խորհրդատվական ծառայությունների ոլորտում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն:
- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, բիզնեսի կառավարման կամ այլ հարակից ոլորտում
- Անգլերենի գերազանց իմացությունը (գրավոր և բանավոր) պարտադիր է, ռուսերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն:

Մրցույթին մասնակցելու համար խնդրում ենք լրացնել դիմում/հայտի ձևը, ցանկության դեպքում կցել նաև CV-ն և ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ [hr@ameriagroup.am](mailto:hr@ameriagroup.am):

Նամակի վերնագրում խնդրում ենք նշել պաշտոնի անվանումը:

Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները: